ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր № 7D70-0E2F-15A0
27.01.2015թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2015 թվականի հունվարի 27-ի N 7D70-0E2F-15A0 հանձնարարականի՝ հայտնում ենք հետևյալը.

Հաշվի առնելով, որ գրությամբ բարձրացվող հարցադրումները վերաբերում են ՀՀ կառավարության և UNIDO-ի միջև թե՛ նախկին և թե՛ հետագա համագործակցությանը, ինչպես նաև կազմակերպության ներքին գործընթացներին, ռեսուրսներին և հնարավորություններին՝ նպատակահարմար ենք գտնում կազմակերպել քննարկում բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ UNIDO-ի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված առաջարկների որոշակի մասը հստակ քայլեր են ենթադրում, ինչը կառուցողական նախաձեռնությունների հնարավորություն է ստեղծում: Մասնավորապես, կարևորվում է համագործակցության ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորումը, որը սկզբունքորեն ընդունելի է և համահունչ ՀՀ կառավարության գործելակերպին: Այդուհանդերձ, այդ ուղղությամբ քայլերի պլանավորման գործում կարևոր են համագործակցության բոլոր կողմերի դիրքորոշումները՝ գործընթացը համակողմանի կշռադատված և հիմնավորված կազմակերպելու նպատակով:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ

Կատարող՝ Արդյունաբերության քաղաքականության վարչություն Կորյուն Գևորգյան
597146